Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2Gn
1687

1999

ԳԷՍՄԷՌ ՔԷԹԻՊԷԻ

արձակ և չափաբերական

աշխատութիւնները։

Գրէ՛ այնպէս, ինչպէս որ խօսումէն,
և խօսէ՛ այնպէս, ինչպէս որ գրումէն։
Կառամդին։

Հայկական ՍՍՀ Գրքի Պետական Գրադարան
Гос. Библиотека ЗСФСР Армянской ССР
им. А. Мясникяна
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
Հ.Ֆ. 1692
Գ/687-60

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Ի տպարանի Կայսերական Հեմարանի Դպրոցութեանց։

1855.

Согласно отзыва Г. Адъюнкта Бероева, разсматривавшаго сію рукопись, оная печатать позволяется. — Санктпетербургъ 17-го Марта 1855 года.

Цензоръ *В. Бекетовъ*

Ա-Գ8Ոյ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ներերումս խիստ շատ խօսեցան զանազան բարեմիտ անձինք մեր աշխարհաբառ լեզուի ընդհանուր տարածութեան մասին, որը արդեամբ (գործով) ցոյց տալով դորա օգուտը, ինչպէս Գաբրիէլ Քահանայ Պատկանեանը իրա «Ընարատ» օրագրովը, Մնացածները այլ եւ այլ ուսումնական յօդուածներով, որոնց մէջ պր. Նազարեանցը եւ պր՝ Ախվերդեանը նախակարգ տեղ ունին։ Իմի ինձ ուրիշ բան չի՛ մնում, բայց եթէ մատնանիշ ցոյց-տալ նոցա գովական աշխատութեանցը վերայ։ Դայց կարելի է որ իմ պատուական կարդացողներիցը մինը հարցնէ ինձանից, ինչ նպատակով տպումեմ ես այս փոկրիկ տետրակը։ Իմ պատասխանը այս է. այս տեղ ես մի անձնասիրական կամ ազգօգուտ նպատակ չունիմ. միայն ընկերներիս յորդորանքէ ըստիպուած, լոյս-ընծայումեմ փորձի համար այս անքանքար աշխատութիւններըս, որ պարապ օրերըս կէս մի շարադրել եմ, եւ կէս մի թարգմանել եմ օտար լեզուներից։ Որով հետեւ ես զուրկ եմ այն զլխաւոր արժանաւորութիւնից, որով թարգմանիչը իրա թարգմանած յօդուածների մէջ ազգային ոգի է թափում, այդ պատճառաւ-էլ իմ կարդացողները հեշտութեամբ կարող են իմանալ ո՞ր յօդուացը թարգմանած է, եւ ո՞րը ոչ. ուրեմն աւելորդ էր ինձ ամենի առաջը կամ յետը որոշակի նշանակել։ Դարձեալ որովհետեւ մանրը նիւթերը առած են օրագիրների խառն լուրեր (смѣсь, mélange) ասած մասից, այդ պատճառաւ ինքըս-էլ շատ անդամ չեմ կարողացել իմանալ, ով է նոցա հեղինակը եւ կամ ինչ լեզուով գրրած է նախագաղափարը (оригиналъ). Մէկ խօսքով ես այն մրտքի եմ, որ երրորդական եւ չորրորդական

*

շարադրութիւնների հեղինակի անունը իմանալը կամ չիմանալը մեծ օգուտ կամ վընաս չի բերիլ իմ կարդացողներին։ Այս մասին Հայը մի լաւ առած է ասում. «Հացը համեղ իլի, թէ չէ հեփողը ըրհուտ է, թէ թուրք, հաչաթըս չէ։»

Թէ առաջի տետրակս սիրով ընդունեցին մեր ազգակից, միտք ունիմ միւս ձեռագիրներիցէս-էլ կամաց կամաց տարեկան փոշին թապ-տալ եւ տրպել. թէ չէ, մընայ, ինչպէս որ կայ. դորանից մեր ազգը մեծ վընաս չի քաշիլ. մանաւանդ որ գրրելու ժամանակ բացի մի քանի բարեկամներէս, ոչոքի միտք չունէի հաղորդել երիտասարդութեանը այս խակ պրտուղները։ Այս գրլխից եմ ասում, որ տետրակներից միտք չունիմ օգուտ քաղել. ուրեմն թէ տրպելու ծախսը դուրս-հանեմ մէջից, լաւ. բայց թէ ամուսայ մէջ մի բան աւելորդ մընայ, կ'աշխատեմ նորանով միւս տետրակների արտաքին ձեւը գեղեցկացնել, թէ թղթի կողմանէ եւ թէ զարդարելով պատկերներով։ Աւել ասելու բան չունիմ, զի այս sapipienti sat։

Դամառ-Քաթիպա

1855. Փետրուարի 17.

Ս Պ. Բուրգ։

Երկու քոյր։

(Ղ-էր Սէմէօն Ամէրդոնէանէն)

Մեղնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի, գլխով ալեւոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը։
Ունէր նա երկու մատաղհաս (1) աղջիկ,—
Մեծը խիստ տգեղ (2), փոքրը գեղեցիկ։
Մի օր տգեղը ասաց միւսին.
—Երթանք ծովի ափ, քուրիկ, միասին։—
Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը ետնից ոխ պահած սրտում,
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քրոջ գլորեց նա ցած։
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
„Քուրի՛կ իմ, քուրի՛կ, փրկէ՛ ինձ մահից.
Այս ունիմ տանը գեղեցիկ մանեակ (3),
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ՛ ինձ կեանք։“
—Ոչն առանց քեզ-էլ կարող եմ ստանալ.
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։—
„Քուրի՛կ, թէ էդ-էլ քեզ չէ՛ բաւական,
Կ'տամ քեզ ոսկի պսակ պատուական։“
—Ոչն առանց քեզ-էլ նարող եմ ստանալ.
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։—

---

(1) Ջահիլ, молодый. (2) գեղջ, գէշ, дурный. (3) կէրտանլէխ, ожерелье, фермуаръ.

„Քուրիկ մ՚ թողնիլ դու ինձ անտերունջ (1),
Քեզ սիրուն փեսաս կ՚տամ անտրտունջ։“
Տգեղի սիրտը դարձել էր ժեռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար։
Զկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան.
Դուրս-հանեց ջրից, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրէն ու շատ խոտ։
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան.
Տարաւ իրա այդ անգին գիւտը,
Զորացուց նորա մարմնոյ գիպ հիւթը (2),
Գեղեցիկ տաւիղ (3) շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից։
Ամբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Դրնաց արքունիք (4) տաւիղը ձեռքին։
Ամբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ ազեղ ին փեսի մօտ կանգնած։
Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առաջ նա այսպէս երգեց.
«Հնչէ՛, իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,
«Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.
«Լսէ՛, իմ ծնող, լսէ՛, սիրական,
«Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
«Լսէ՛, ժողովուրդ, լսէ՛ անխռով,
«Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով։»
Մի-ւս օր դահիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին,
Հուրը պլպլալաց, աղջիկը կանչեց,
—Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց։—

№ 1.



(1) անտերունջ, безпомощный. (2) сокъ. (3) арфа. (4) царскіе чертоги, дворецъ, թագաւորի տուն։

Երեք ցանկութիւն։

(Բարոյական առակ)

Ժամանակաւ կար մի միջակ հարբստութիւնով մարդ. էս մարդու սիրտը տուեց պրսակուելու, որ յիրաւի առաւ մի սիրուն կընիկ։ Մէկ ձրմեռուայ երեկոյ մարդ ու կընիկ կրրակի առաջ նըստած, իրարու հետ խօսում էին հարեւանների հարբստութեանը վրրայ։ Կինը ասում էր. „Թէ որ ես իմ սրրտի ուզածը կարենայի ունենալ, յիրաւի՛ որ ամենից հարուստը ես կըլինէի։“

—Իմ մրտքիցըս-էլ, ասաց մարդը, շատ անգամ անցնում են այդպիսի մրտմրտանքներ. շատ անգամ ինքըս ինձի ասում եմ. ի՞նչ կը լինէր, թէ որ մենք ծընած լինէինք վրհուկների (1) դարը, որ նոքա մեր սրրտի ուզածը իսկոյն կատարէին։—

Դեռ եւս խօսքը բերանն էր, մին-էլ տեսնես յանկարծ եկաւ կանգնեցաւ առաջներին մի սիրուն կին եւ ասաց նոցա. „Ես վրհուկ եմ. խօստանում եմ ձեզ ձեր առաջի երեք խընդիրքը կատարել. միտերրդ պահեցէք, որ միայն երեք խընդիրքն եմ կատարելու, եւ ո՛չ աւել։“

Ասաց եւ աներեւութացաւ աչքերից։ Մարդ ու կընիկ վախից ու զարմանքից շուարած (2) մընացել էին տեղերումը։

Կինը առաջ ըսկըսեց խօսել։

„Թէ որ ինձ կըհարցնես, ասաց, ես ցանկանում եմ հարբստութիւն, գեղեցկութիւն եւ մեծ անուն։“

—Տե՛ղը մընայ քու հարբստութիւնը կամ գեղեցկութիւնը. թէ որ յանկարծ մեր վրրայ հիւանդութիւն, կա՛մ վիշտ, կա՛մ արագ մահ գայ, ի՞նչպէս պիտի օգնէ էն ժամանակ քու հարբստութիւնը։ Չէ՛, հոգիս, իմ ցանկութիւնը քու ցանկութիւնից լաւ է. ահա՛ ես ինչ եմ ուզում. առողջութիւն, զուարճութիւն եւ երկար կեանք։—

„Առանց փողի ի՞նչ եմ անում քու առողջութիւնը, պատասխան տուեց կինը. քու ցանկութիւնից էն դուրս կը գայ, որ մեր տարաբաղդութիւնը երկար կը տեւի (կը քըշի)։ Ա՜խ վրհուկ, վրհուկ, դու մեր ո՛չ թէ երեք, այլ տասնըերեք խընդիրքը պէտք է կատարէիր, որ բանը բանի նըմանէր։“

(1) կախարդ կամ ջատու կնիկ, ворожея. (2) զարմացած, остолбенѣвшій.

— Յիրաւի՛ է ասածդ, ասաց մարդը, բայց մէկ քիչ ըսպասե՛նք, տեսնենք Աստուած ի՞նչ կը յաջողէ. էգուցվանից միտք կ՚անենք, թէ մեզ ի՞նչ ամենահարկաւոր է, որ էն ուզենք վըհուկից։ —

„Լա՛, ասաց կինը, բոլոր գիշեր միտք կ՚անեմ էդ մասին, բայց հիմի երթանք փոքր ինչ տաքանանք։"

Ասաց ու յարդարիչը (1) ձեռքին ըսկըսեց ածուխները (2) դէս ու դէն խառնել։

„Ի՞նչ լաւ խոռ է, ասաց, երնէկ մի երշիկ (3) էր իլէլ, որ խորովէինք մէջը, շատ փառաւոր իրիկնահաց (4) կ՚ունենայինք։"

Դեռ խօսքը չէր պըրծել, մին-էլ տեսնես ծըխանից (5) մի մեծ երշիկ ցած-ընկաւ։

— Այ հողե՛մ գլուխդ, աչքածակ, երշիկդ-էլ հետը, ասաց մարդը, էդ էր քու լաւ խընդիրքը. քու շնորքով հիմի միայն երկու խընդիրք մնաց. թէ որ բանը էդ տեղ հասաւ, ես էլ կ՚ուզեմ որ երշիկը քըթիդ կպչի։ —

Բայց քիչ որ անցաւ, մարդը տեսաւ որ իրա ցանկացածը կընկանից տասնապատիկ աւել յիմարական էր, պատճառ որ երշիկը թըռել նըստել էր կընկայ քըթին ու ամենեւին չէ՛ր պուկ-գալի։

„Վա՛յ իմ գլխին, ասաց կինը, այսուհետեւ ի՞նչ պիտի լինի իմ ճարը։ Այ չարահոգի, ի՛նչդ աւելացաւ, որ երշիկը քթիս կպցրիր։„

— Աստուա՛ծ է վկայ, ասաց մարդը, որ մտքումըս քեզ վատութիւն չիկար. բայց ի՞նչպէս օգնենք հիմի. թող ուզեմ մեծ հարստութիւն, որ քթիդ համար ոսկի աման շինել տամ։ —

„Չէ՛, չէ՛, ասաց կինը, թէ որ էս երշիկը քըթիս վրայ մնալու է, ինձ պէտք չէ կեանք։ Մի խնդիրք-էլ ունինք, թէ էն ինձ կըտաս, լա՛ւ, թէ չէ՛ — իսկոյն դուրս-կըթռչեմ պատուհանից։"

Այս որ ասաց, վազեց պատուհանի մօտ։ Մարդը որ նորա շատ սիրում էր, ձեռքը բռնեց ու ասաց.

— Կա՛ց, սիրական, վերջի խընդիրքն-էլ քունը լինի, ինչ ուզես ցանկացի՛ր։ —

„Թէ որ էդպէս է, ասաց կինը, ես ուզում եմ որ երշիկը քթիցս ցածընկնի։"

Իսկոյն երշիկը ցած-ընկաւ։

---

(1) щипцы, մաղաշ. (2) քամուր, գորձլի, уголь. (3) սուջուղ, колбаса. (4) ужинъ. (5) օջաղ, труба.

Կինը որ մարդիցը խելոք էր, ասաց.

„Երևի վհուկը մեր վրայ ծիծաղել ուզաց, որ խիստ տեղով էր։ Ով գիտէ, շատ կարելի է որ, թէ հարուստ դառնայինք, հիմիկուանից տարաբաղտ կ՚լինէինք։ Ի՛նչ, սիրական, էստուրից դէնը աւելի պակաս բաները չի ցանկանանք, այլ ամեն բան Աստուծոյ կամացը թողնենք։ Հիմի ե՛կ ուտենք էս երշիկը, որ մեզ մնաց երեք ցանկութիւնից։"

Մարդը խոստովանեցաւ, որ կնկայ ասածը ճշմարտ է. էդ օրից դէնը էլ ցնորական մրտածմունքներ չէին անում։

Թիֆլիզի քէֆ.

Թէ սիրումիս թամաշա (1),
Պըտիս տեղնի քաղքումը (2)
Ի՞նչ ին անում համաշա՝ (3)
Մարդիկ իրանց բաղչումը։

—

Հալի-հալէ՛, հալի-հալէ՛,
Այս ին անում քաղքումը,
Հալի-հալէ՛, հալի-հալէ՛,
Մարդիկ իրանց բաղչումը։

—

Ծալապատիկ ծառի տակ
Միր լոթիքն (4) ին նըստոտել.
Տըկճուրներն (5) ու խելադէք (6)
Իրանց բոլոր մօտ-արել։

—

Մին մինի կենաց ին խմում-
Մեռելոց ու կենդանեաց,
Մին մինի բօղազն ին խրում
Շամփուրներով խորոված։

—

Հազար-փէշէն (7) լի գինով
Կըլկըլացնում խըմում ին.
Տիկը բըռնած պինտ ձեռով,
Իսնի, ասիս, թո՛ղնում ին։

—

Քաչալ գըլուխ զուռնաչին
Հառալօ է որ փըչում.
Տիմպլիպիտօն (8) լըսողի
Ղուղն ու ականջն է տանում։

—

Միր պտուելի քաղքըցուն
Աչքը ճակտին է թըռել.
Դամաղին (9) կըպել լիզուն,-
Ի՛լ չի ուզում նա լըռել։

—

Քաղքըցու գօղալ քալին (10)
Մարդիցը յիտ չի՛ մընում,-
Ձեռին առած մինծ կօվզին (11),
Օ՞օռ է տալի կախէթուն։

—

---

(1) տեսարան, зрѣлище, увеселенье. (2) Թիֆլիզումը. (3) միշտ, ամեն ժամանակ, всегда. (4) քէֆ-սիրող, гуляка. (5) տիկ, թուլուպ, бурдюкъ. (6) նեղ բերանով փարչ, узкогорлый кувшинъ. (7) շերեփի նման աման գինի խմելու համար. (8) երկու փոքրիկ թմբուկներ մի մինի կպած, родъ барабана. (9) քիմք, нёбо во рту. (10) սիրուն կնիկ красавица. (11) ջուր խմելու աման, ковшъ.

Դրըմբացնում է դահիրան(1)
Իրա փափուկ մատնիրով,
Պար է գալի լեզգինկան
Աղունակի վուտնիրով։

—

Այստի, -կիկոն Օ՚ուլօին
Քընաթաթախ զրռում է,

Այնտի Վ՚անօն ձալօին(2)
»Այրթի քալին« մրռում է։

—

Այս ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղէումը.
Թէ սիրում իս թամաշա,
Պլտիս իլի քաղքումը։

№ 2.



ԱՌԱԿՆԵՐ և ԱՌԱՆՑՆԵՐ (3)

Կարմիր ձուն զատիկ օրուան »ալ-կ՚դայ։
Կարմիր ոսկին սև օրուայ համար պահէ՛։
Կկուն (4) բերաւ, ցցուն կերաւ։ (Շ՚ռայլ ժառանգի համար ասած է)։
Զին գողանալի՞ց յետ ախոռի դուռը փակում ես։
Անբիծ (5) ընկեր պըտրողը անընկեր կ՚մնայ։
Մե՛ղը մե՛ղը ասելով, բերանըդ չի՛ քացրանալ։
Մուխից փախած, կրակը մի՛ ընկնիլ։
Չի մտած միտք-արա՛, թէ ի՞նչպէս դուրս-գաս։
Արիւնը ջրով է խտակվում, ոչ թէ արիւնով։
Տգէտը ինքը իրան է թշնամի է, ի՞նչպէս կարող է ուրիշին բարեկամ դառնալ։
Ղունիս փող, մա՛ր հող։
Ուսեալը առանց արդիւքի նման է անանձրև ամպի։
Աղռաւին հարցրին, »Որ թռչունն է գեղեցիկ։« Ասաց,—Իմ ձդերը։—

Հայկական Պատգամներ

Ով չի ծնած մեռաւ։—Ադամը։
Ով ծնաւ ու չի մեռաւ։—Աղիա մարգարէն։

(1) դափ, бубень. (2) հօր կամ մօր քոյրը, тётка. (3) пословицы и поговорки. (4) кукушка. (5) անարատ, առանց այպի, безпорочный.

Ով մի անգամ ծնաւ, երկու անգամ մեռաւ։—Ղազարը։
Ով երկու անգամ ծնաւ, մի անգամ մեռաւ։—Յովնան մարգարէն։
Ի՞նչ բան թըրից աւել սուր է։—Արդու լեզուն։

ԳԻՐՔ

Շ՚ահաւէտ և իմաստուն գրքեր կարդալով, այնպիսի զուրճութիւն ենք զգում, որ տգէտ մարդուն բոլորովին անյայտ է։ Այրբ-որ պարապ ժամանակ գիրք կարդում ենք, կարծես-թէ իմաստունների հետ նըստած խօսում ենք կամ լսում ենք նոցանից բարոյական և առաքինի խրատներ. նոցանից սովորում ենք այն դժուար ուսումը, որ կենցաղավարութիւն (1) է ասվում։ Այրբ-որ կարդում ենք պատմութիւն, այսինքն, աշխարի վերայ անցած բաները, մտից ծանօթանում ենք մարդուս սրտի գաղտնի ճանապարհներու հետ։ Այրբ-որ կարդում ենք բանաստեղծութիւն (2), սըրտերըս փառաւորվում է բնութեան և առաքինութեան գեղեցկութիւններով։ Միայն տգէտը և տխմարը փախչում է մեր այս հաւատարիմ, անքակ, կրթած և լուսաւորած բարեկամէն։

Աղէ՞ն պա՞ն է։

Սարգիս

„Օ՚արմա՛նք բան է, հէնց դիտենաս
»Աղէք տանը չին նըստում,
„Իսկի չելաւ, վուր մի դրանիմ
»Աղալօին իր տընում։«

Մարկոս

—Մի՛ արմընա, պարուն Սարգիս,
Այս աշխարքի ադաթին,
Իշխանք, դանա (3), դու խաբար-չի՞ս,
Վ՚ուր քասիբին կու ատին։

Ա՛ռ օրինակ, թէ մեծավուր
Ապալեոնիրը ուսին,
Գայ դըրան մօտ, հարցնէ աղին.
„Տա՞ն է“. — տանն է, կ՚ասին։

(1) обшежитіе. (2) поэзія. (3) միթէ, развѣ.

Նբրա էդնից մի փէշաքար(1)
Իլի էն նօքրին հարցնէ.
„Տա՞ն է աղէն„, կընծին տալով,
Խեղճին իսկոյն դուս-կ՚օնէ։

Թէ աղի մօտ լաւ շուրերով
Կու գաս, տանը կու գրթնիս,
Վ՚ա՛յ թէ չուխէդ հընացած է,
Լաւն էն է, տուն չի մընիս։

Թէ սալօպով աղջիկ-պարոն(2)
Կու գայ, թող ներս հրամայէ՛,
Թէ ղաթիպով(3) պառաւ ձալօն
Հարցնէ, կ՚օսին, „տանը չէ՛։„

Թէ վուր ձեռիդ քիսա բրռնած
Պարունին փուղ բերիլիս,
Փառք ու պատուով ներս-մընումիս,
Դրլխի վրրայ տիղ ունիս։

Թէ դուքանդարիս, հիսաբով
Փուղի էդնից իս էկի,
„Տա՞ն է աղէն„, կ՚օսին. —Հալա
Ժամիցը տուն չի էկի։—

Էս է հիմիկուայ ադաթը—
Կ՚ուզիս ջիգրից տրռաքի,
Թէ քասիբիս, ջուր ընկի,
Թէ խօջաիս, տուն-մընի՛։—

---

(1) արուեստաւոր, ремесленикъ. (2) տիկին, խաթուն, госпожа. (3) չադիր, чадра.

ԿՐՌՈՒԱՍԻՐ

Կան մարդիկ, որոնց համար կրռիւը, ունայն վէճը (1) մի նոր տարը (2) է դրձել, նոցա համար այն օրը կորած է, երբ-որ նոքա չի կարողանան մեկի վրայ թափել իրանց սրրտի դառնութիւնը։ Ինձ այնպէս է թրւում, որ թէ այդպիսի մարդուն մի շաբաթ փակես առանձին սենեակ, հայելիի մէջ ցոլացած պատկերի հետ կրռիւ կը բանայ սրրտի նեղութիւնից։

Աղո՛ղ-Կարապետ։

Պարոն Կիրակոսը. Ա՛յ դարշելի, դու՛ ինձ միշտ պէրք է էսպէս դռան մօտ երկու սահաթ սպասել տաս։

Գրիգորը (ծառան). . Պա՛ռոն, ես բաղէուն մի էի. էնից որ լսեցի հրրամանոց թրխթրխկացնելը, իսկոյն վազեցի դուռը բացելու։

Պարոն Կիրակոսը. Քաշկա վիզդ կոտրրուեր, որ միւսանգամ դուռը էլի կողպէիր։

Գրիգոր . . . . . Պա՛ռոն, երեկ էէ՛ր, դուռը բաց թողնելու համար ինձ կրռիւ արար. թէ բաց ես տեսնում, ուշունց ես տալի. թէ կողպած—է՛լի ուշունց ես տալի։ Էս էլ չէմ իմանում, ի՞նչ պէտք է անել։

Պարոն Մարկոսը. (Տնաղ-տալով) Ի՞նչ պէտք է անել, ի՞նչ պէտք է անել . . .

Գրիգորը . . . . . Քու տանը չ՚իլած ժամանակը ուզում ես որ դուռը բաց թողնեմ։

Պարոն Կիրակոսը Չէ՛, չէ՛մ ուզում։

Գրիգորը . . . . . Բաս կողպեմ, է՛լի։

Պարոն Կիրակոսը Չէ՛, պէտք չէ՛։

Գրիգորը . . . . . Ուրեմն, պարոն . . .

Պարոն Կիրակոսը Էս քանի՞ խօսես լեզուագար շուն։

Գրիգորը . . . . . Հազար երանի էր ինձ կամ լեզու չ՚ունենալ, կամ խելք։

---

(1) կռիւ, դավա, споръ. (2) стихія.

Պարոն Կիրակոսը Զէնդը կ'կըտրե՞ս, թէ չէ՞։

Գրիգորը . . . . . Աղա՛, քու ոտքին զուռբան, մի բան ասեմ—լսի՛ր։ երկուսից մինը ջոկի՛ր, որ ես մինը կատարեմ, միւսը ո՛չ։ ախըր դու ինձ տեղեակ բան չե՞ս հրամայում, ամա խիստ շատ պահանջում ես։

Պարոն Կիրակոսը Այս քեզ հազար անգամ ասել եմ. . . ես ուզում եմ որ ես. . . (մոլորվում է) փիյէ՛, մի էս լակոտին տե՛ս նօքար գըլխովը ուզում է հարցափոնութիւն ա՝ նել. . . ա՛յ, ես հիմի կը տեսնեմ քու հալը։ թէ որ խօսքիս պատասխանը չե՞ս տուել. . . էն վախտ ես. . . կըցոյց-տամ. . . ինչ եմ. . . ուզում. . . Տունը աւլե՞լես։

Գրիգորը . . . . . Հրա՛մերես, երեսիցս խստակ է։

Պարոն Կիրակոսը Բակն-է՞լ։

Գրիգորը . . . . . Թէ մի հատ չօփ գըտնես, հախըս կտրի՛ր։

Պարոն Կիրակոսը Ոչին ջուր տուե՞լ ես։

Գրիգորը . . . . . Հրամերես, թէ չես հաւատում, թէկ'ուզ հարցո՛ւր հարևանից, նա քեզ դրուստը կ'ասէ։

Պարոն Կիրակոսը Գինիով բութելները տարա՞ր, ուրտեղ որ հրամայել էի։

Գրիգորը . . . . . Հրամերես, ամա մի հատ լիքը բութիւ չի կար, ամենն-էլ դարտակ էին։

Պարոն Կիրակոսը Գիրը տարա՞ր փօշտա։

Գրիգորը . . . . . Հրամերես, շունն իլեմ, թէ չեմ տարել։

Պարոն Կիրակոսը Այս քեզ հազար անգամ ասել եմ, որ քամանչադ չի ղըռզըռացնես. դու ինձ անկաճ չե՞ս անում։ էս օր առաւօտն-էլ գլուխըս հոտացրիր. . .

Գրիգորը . . . . . Այս օր առաւօտ, միտրդ չէ՞, պարոն, որ դու նորա չորս օր առաջ կըտոր կըտոր արեցիր։

Պարոն Կիրակոսը Այսքան ժամանակ փէտերը. . .

Գրիգորը . . . . . Պարոն, ես դարսեցի, ինչպէս որ պէտք էր։

Պարոն Կիրակոսը Ա՛հ, սիրտս տռաքեցաւ էս անիծածի ձեռքից։ մի ծառայ չեմ տեսել, որ ինձ էսքան կատաղացրած իլի։ սըրա ձրուից ես կը մեռնեմ։ դուրս տունից, դուրս։

Օրօրոցի երգ գիւղական այրի կնոջ։

Քընէ՛, քընէ՛, սիրուն որդի, քու մօր սըրտին ըսփոփանք,
Քեզ օր կ'ասեմ տըխուր ձենով, օր օր, օրեր ու շատ կեանք։
Օրօրոցըդ ձեռով շաժեմ, բերնով երեսդ համբուրեմ,
Քեզ շա՛տ օր օր, քեզ շա՛տ օրեր, քեզ շա՛տ արև կու երգեմ։
Աչքըդ փակէ՛ այդ լուսափայլ աստղի նըման փայլածը,
Որ մինչև այդ(1) երկինքումը երևում է ցոլածը։
Աչքիդ շողը (2) սիրտս է ծակում, նորոգում է իմ խոցը,
Աչքըդ փակէ՛, իմ սիրական, հերի՛ք սըրտիս այրածը։
Աչքըդ փակէ՛, քաղցր քընէ՛, քեզ օր կ'ասեմ ես լալով,
Հօրըդ բանը իմաց-կ'անեմ, դու ականջ-դիր նիրհելով (3).
Հայրըդ զօրեղ երիտասարդ առաւ բաղէն, դութանը (4),
Լըծեց երկու զոյգ (5) եզները իր սըրածայր արօրը (6)։
Գընաց դաշտը երգ հնչելով, երգ ասելով, երգելով,
Քաղցր ձենով երգ կանչելով, երգ երգելով, և լալով։
— Ինչի՞ համար սուգ ես անում, սուգ արտասուօք և լալով,
Այսաց հօրըդ հարևանը աչքէն առուք վազելով։
Լոզներըդ գէր, գէր ու պարարտ վազ ի վազ են դէպ դաշտը,
Շատ կու վարեն, շատ կու հերկեն, շատ կու կանեն քու արտը։
Արեգակը մայր չի մըտած դու կը դառնաս արօրէն,
Քեզ Ղանանը առաջ կու գայ գըրկում բըռնած երեխէն։—
Գորգին երգով հարևանին այսպէս տուեց պատասխան.
„Լոզներըս չե՞ն ինձ մնալու, իմ աչքի լոյս հարևան.
„Օրավարըս (7) ես չե՞մ կարող այսօր վերջը հասցընել,
„Պիտի մնայ հող ու արտըս անվարուցան, անայցել.
„Դիակիս մօտ գէր ու պարարտ (8) իմ եզները վիզը ծուռ
„Պիտի մնան, թէ ո՞վ նոցա երեկոյին կու տայ ջուր։
Հարևանը աչքը արցունք մեզ սև համբաւը բերեց,
Թէ շուտ արէք, եկէ՛ք, տեսէ՛ք, թէ ձեզ Գորգին ի՞նչ արեց։
Ի՞նչ ես արել. դանք ու տեսնենք, վա՛յ մեր անբաղդ աչքերուն,

---

(1) առաջի լոյս, заря. (2) արեգակի ճառագայթը, лучь. (3) մրափել, дремать. (4) մեծ արօր, большой плугъ. (5) Ջուխտ, пара. (6) սաբան, плугъ. (7) асге. (8) էաղ, գէր, жирный.

Նետը ցրցուած է սրրտիդ մէջ, տակրդ ճապաղ (1) քու արիւն.
Նետը ցրցուած քու սրրտի մէջ օդը ճրդքեց, դիծ արաւ,
Դիծը սև էր երկինքումը, աչքրս ծառի մօտ տարաւ.
Ծառի յետնէն թաղ-կեցած էր մեր գեղացւոց Թրշնամին,
Մեր գեղացւոց հին ատելին, տաւարի գող Աղիդին։
Դու սիրական սիրուն որդի, քընէ՛ քընէ՛ զօրանաս,
Քու մօր համար մրխիթարիչ ու ըսփոփիչ մեծանաս։
Մի՛ տքրդ-պահէ՛ քու հօր արտը, դէր ու պարարտ եզները.
Մի՛ տքրդ-պահէ՛ մաճն (2) ու սամիք և սրրածայր արօրը.
Երբ մեծանաս, երթաս դաշտը, ուզես վարել քու արտը,
Քու մօր համար ուսով բերել ցորնի խուրձը (3) ու բարդը (4),
Առաջ դընա՛, դետը անցի՛ր այն սրրահոս Աստխէն,
Դընա՛, դրտի՛ր այն Աղիդուն, որ այն ծառի ետևէն
Նետը քաշեց, օդը պատռեց, քու հօր կեանքը սև արեց.
Թող Դորդիի եզները տայ, որ այն օրը փախցրրեց։
Դէր ու պարարտ քու եզները սայլին (5) լծէ՛, սիրական,
Դարձի՛ր, սրրէ՛ քու մօր աչքէն այս արտասունք տրրտմութեան։
Քաղցր ձենով երգ հընչելով, երգ երգելով տուն արի....
Ա՛խ, երբ կ'իլնի, որ մեծանաս — իմ բաղձանքը կատարի։
Այժմ քընէ՛, աչքրդ խրփէ՛, հանդըստացի՛ր օր օր օր,
Թող քու մայրը աչքէն թափէ՛ արտասունքը իւր յորդոր.

---

(1) кровопролитіе. (2) արօրի կոթը. (3) ցորենի կապոյ. (4) դիզած հունձ, стогъ, (5) արաբա, телега.

«Ազգային գրադարան»
NL0349387